

Ո. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՍԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 7 Յունիս. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ա. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Տաթև Արդ. Դարբակեան:

● Դշ. 10 Յունիս. — Վաղուան Համբարձման տօնին առթիւ, կէսօրէ ետք ժամը 2ին, Հոգչ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի գլխաւորութեամբ, Սրբամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբատեղւոյն ուստիէն ետք, մեր վրանամատրան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Համբարձման մեծահանդէս նախատօնակը: Դիշերասկիզբին կատարուեցան Եկեղեցէի և Հսկման կարգեր ու ապա առաւտեան ժամերգութիւն: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 10ին:

● Եշ. 11 Յունիս. — ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱԱԽՆ: Առաւտեան ժամը 7ին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս.ի գլխաւորութեամբ, ամբողջ Սիաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ ու քիչ ետք «Հաշափառութիւն մատուք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր մեր վրանամատրան մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և Համբարձման խորհուրդին շուրջ քարոզեց Գերշ. Լուսարարապետ Սրբազնը, յայտնելով թէրարձունքները յատկանաշական դեր ունեցած են Քրիստոսի երկրաւոր կեանքին և քրիստոնէական կրօնի պատմութեան մէջ: Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք՝ Մայր Աթոռի Սիսէն Ս. Էջմիածնի վրասաղութեան տարեգարձի առթիւ, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպոս.ի իսկ Ս. Պատարագէն ետք Գերշ. Պատարագի է Սրբազնը նախագահնեց Սրբավայրին առջև կատարուած Անդաստանին:

— Կէսօրէ ետք ևս, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Անդաստան: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպոս:

● Եր. 13 Յունիս. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Համբարձում վերնամատրան մէջ: Ժամարարն էր Արժ. Տ. Կարապետ Քհնյ. Անգրէասեան:

— Բ. Մաղկազարդի նախատօնակին ի Ս. Հրեշտակապետ նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպոս:

● Կիր. 14 Յունիս. — Երեսորդ Մաղկազարդ: Առաւտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Յավսէփ Վրդ. Մամուլ:

● Եր. 20 Յունիս. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Արշակ Արդ. Խաչատրուքեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Հոգեգալստեան մեծահանդէս նախատօնակը, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս.ի:

— Երիկնագէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Եկեղեցէի և Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպոս:

● Կիր. 21 Յունիս. — ՀՈՒԵԳԱԼՈՒՄ (Պետեկոսէ) և Բարեկենդան Եղիական պահոց: Մայր Տաճարի Առաջ Սեղանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և օրուան տօնին շուրջ քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս. Քարոզը և Ս. Պատարագէն մաս մը ձայնասփռուեցան Յորդանանի ռատիօնակայանէն: Ս. Պատարագի ընթացքին կարդացուեցաւ գլխաւորութեամբ, մատուցած Սկզբանի կատարուեցան նախատօնակը: Դիշերասկիզբին կատարուեցան Եկեղեցէի և Հսկման կարգեր ու ապա առաւտեան ժամերգութիւն: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 10ին:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Անդաստան: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպոս:

● Եր. 27 Յունիս. — Ե. օր Հոգ. Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի տանիքին արեկեկան կազմը գտնուող Ս. Հոգիի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վագշէ Արդ. Խոհատիսուհան:

● Կիր. 28 Յունիս. — Սկիզբն Յառութեան Կիւրակից եւ յիշաւակ Եղիայի մագարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ա. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Տաթև Արդ. Դարբակեան:

— Ս. Հոփիսիմեանց նախատօնակին ի Ս. Հրեշտակապետ նախագահնեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս:

● Բշ. 29 Յունիս. — Ս. կուսանցի Հոփիսիմեանց: Առաւտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Եկեղեցւոյ աւանդատան: Ս. Հոփիսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կոմիտաս Արդ. Պատուէրեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Եր. 6 Յունիս. — Առաւտուն, Ամեն. Ա. Պատրիարք Հայրը մեկնեցաւ Գէյրութ:

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս. Միաբան Հայրերու Ընկերակցութեամբ, քացումը կատարեց Ս. Թարգմանչանց Երկրորդական Վարժարապետ տարեկան Պաշտօնին:

• Գլ. 9 Յունիս. — Սպանական ընդհ. Հիւպատոս Պր. Գաբրիոն ՏԸ Օքէղէի մեկնումին առիթով, իրենց Հիւպատոսարանին մէջ տրուած ոչչերթի երեկոյթին ներկայ եղաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպօս., ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինդլեանի:

• Եր. 13 Յունիս. — Առաւուուն, Ժամանգարժարանի և Ընծայարանի Տեսուչ Հոգ. Տ. Ցակոր Վրդ. Վարդանեան մեկնեցաւ Հաւելոյ յառաջիկայ գարոցական տարեշրջանին համար ժառանգաւոր առանձագրելու պաշտօնութ:

— Կէսօրէ ետք, Արիտանական ընդհ. Հիւպատոսարանին մէջ, Անդիոյ Ն. Վ. Էլիզաբէթ Բ. Թագուցիի ծննդեան տարեղարձին առիթով տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպօս., ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ցակոր Վրդ. Նաւարեկանի և Տիար Կարպիս Հինդլեանի:

• Դլ. 24 Յունիս. — Եւրոպացւոց Ս. Յովհաննէս Մկրտչի ծննդեան առիթով.

Այնք ձօն Ակնարութարանին մէջ տրուած թէյասեղանին ներկայ գտնուեցան Աւագ Թարգման Հոգ. Տ. Գէորգ Վրդ. և Տիար Կարպիս Հինդլեան:

• Եշ. 25 Յունիս. — Պատոց Եպիսկոպոսարանի վարժարանաց ըրջանաւարտներու վկայականի բաշխման հանգեսին Պատրիարքարանին կողմէ ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Յովհաննէս Վրդ. Մամուր:

• Կիր. 28 Յունիս. — Կէսօրէ ետք ժամը 5.30 ին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպօս., ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգ. Տ. Գէորգ Վրդ. և Տիար Կարպիս Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Լատինաց Պատրիարքարանի եկեղեցւոյն մէջ, և 0 Պօղոս Զ. Պապի Գանձկաւութեան առաջին տարեղարձին ամիսի, Լատինաց Պատրիարքին կողմէ մատուցուած Ս. Պատարագին և անօր յաջորդաղ Գոհարանական Մազմանքին, որմէ ետք չնորաւորեց Լատինաց Ս. Պատրիարքն ու Պապական նուիրակը այս ուրախ առիթով:

ԱՌԱՋՈՒՅՈՒՆԻ ԽՄԲՈՎՐՈՒԹԻՒՆԻ ԵԽ ԿԻՒՂԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՃՆՈՐՉԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆ ԵԽ ՀԵՏԵԿՈՒԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նոր Քարոզ (Բ. Տագարութիւն) - Բէնրոտֆի: Նուէր Հայկ Արամ Գաւինճեանէ: Պէյրութ, 1964, էջ 54:

Հարս ու Կեսուր - 3 Արտր: Յայտագիր: Պէյրութահայ Բուլիսականներու Թատերախումբ: 20 Մարտ 1964: Հեղինակ Գրիմ Սիմոն: Նուէր Գաւիթ Յ. Էլեքէկէլիսոնէ: Մեկնութիւն երգ Երզոց Առզունի - Գրիգոր Նորեկացի: Հրատ. և նուէր Հայ Եկեղեցւոյ Եղբայրակցութեան, Պէյրութ, 1963, էջ 148:

Ցորիկան Գեր. Մանուկ Մ. Վ. Վ. Բոլատեանի - Բահամայտական Զեռնագրութեան և Ժողովրդապետական Գործունելութեան 25ամեակի առթիւ: Թէհրան, 1963, էջ 15: Նուէր Ցորիկան:

Գալուս Մեծատունի Պատմութիւն (Աւանդավէպ) - Թրգմ. Կ. Տօնիկեան (Առարտառ): Հրատ. և Տպարան Կ. Տօնիկեան և Արդիք Գրատան, Պէյրութ, 1964, էջ 37: Պաշտիւր Մշակութային Թատերասիրաց Միաւթեան Փոքր Թատերախումբին մասին: Խթանպաւլ, Նուէր «Բուլիս»էն, 1964, էջ 26: [1964, էջ 146]: Գուրգէն Մահարի Վաթուսնի Հանգրաւանին - Գրիգոր Շահինեան (Աւրատ.): Պէյրութ, Բաւեկիւր Հայուղին - Հ. Աւատիք Թալաթինեան (Աւրատ.): Վենետիկ. Ս. Դազար, 1963, էջ 118:

تصدرها - بطريركية الارمن الارمئودكس المدير والمقرر المسؤول - صاحب النافذة رئيس الأساقفة هايكازون أبراهمان
المدد 7 تطبع في مطبعة دير الارمن - القدس
يوليو ١٩٦٤

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Archbishop Haigazoun Abrahamian Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.